

Լռակյացները - Գյուղացիների ծանր ապրուստը

Ձավախքում ակտիվորեն սկսվել են գարնանային աշխատանքները: Աշնանը մշակված հողատարածքներում սկսում են հացահատիկ կամ կարտոֆիլի ցանքս: Այն տևում է մինչև մայիսի 10-15-ը: Ձավախքում առաջատար ճյուղերն են կարտոֆիլագործությունը, անասնաբուծությունը և հացահատիկային մշակաբույսերը:

Թե, Ո՞ր ժամանակահատվածում պետք է հողը մշակել, ցանել և կիրառել համապատասխան թունաքիմիկատներ կամ պարարտանյութեր՝ լավ բերք ստանալու համար:

Այս ամենը տեղի բնակիչները գիտեն հիմնականում իրենց բազմամյա փորձից: Ճիշտ է, ինքնագրադված ֆերմերները տեղյակ են նոր տեխնոլոգիաների մասին, սակայն ֆինանսական միջոցներ չունենալու և/կամ համապատասխան կրթության բացակայության պատճառով չեն օգտագործում ժամանակակից սարքավորումներ գյուղատնտեսության մեջ բարձր բերքատվություն ստանալու համար: Բացի այդ, այս տարի բնակչությունը այլ խնդիրների առաջ է կանգնել: Նրանք դժգոհում են, որ տարածաշրջանում պարարտանյութերն ու թունաքիմիկատները կրկնակի թանկացել են: Թանկացել են նաեւ սերմցուն ու գյուղատնտեսական ծառայությունները: Գարնանային աշխատանքի մարտահրավերների մասին խոսում են գրեթե բոլոր գյուղերում և այս ամենին գումարվում է վառելիքի բարձր արժեքը:

Այս իրավիճակում պետությունը ֆերմերներին առաջարկում է 300 լարի միանվագ օգնություն՝ 1 հեկտար հողատարացքի համար: Վերջին մի քանի օրերին ես նույնպես դաշտում էի, խոսում էի տեղացիների հետ գյուղատնտեսական թեմաներից և օգնում ընտանիքիս ցանքս անելու գործնթացում:

Շատ եմ սիրում այս պրոցեսը: Գյուղացիներն օգնում են միմյանց, ովքեր վաղ են վերջացնում ցանքսը, գնում են օգնելու ուրիշներին, և համատեղ աշխատանքի այս օրերը շատ արժեքավոր է: Իմ գյուղը փոքր է, այստեղ մենք միասին սկսում և ավարտում ենք աշխատանքը: Աջակցության և համագործակցության գործընթացը իհարկե հեշտացնում է մեր կյանքը:

Այս տարի սերմացուի գների այսպիսի բարձրացման պատճառով համագյուղացիներով նոր գործնական մոտեցում են մշակել՝ միմյանցից հացահատիկ պարտքով (փոխ) վերցնելով: Օրինակ, Նրանք, ովքեր ավելի շատ հացահատիկ/սերմացու էին պահել, քան անհրաժեշտ էր, այն տալիս էին մեկ ուրիշին, պայմանով, որ պարտքով վերցրած հացահատիկը աշնանը բերքը հավաքելուն պես կվերադարձվի:

Այս 300 լարի օգնության հետ կապված լսեցի հետեւյալ համեմատությունը՝ 1 հա կարտոֆիլ ցանելու համար 13-15 պարկ պարարտանյութ է պետք: Վրաստանում արտադրվող պարարտանյութի գինը տատանվում է 72-75 լարիի սահմաններում՝ տարի (անցյալ տարի արժեք 38-40 լարի): Այս ամենին կավելանա սերմացուի, տրանսպորտի, հողի մշակման և այլնի ծախսերը: Հետևաբար, 300 լարիի օգնությունն այսօրվա պայմաններում բավարար չէ:

Կառավարությունը պետք է ուսումնասիրի ինքնագրադված ֆերմերների կարիքները և արդյունավետ քայլեր ձեռնարկի: Բնակչության մեծ մասն այլեւս չի կարողանում հողերի մեծ մասը մշակել՝ սերմացուի բացակայության պատճառով: Այս պատճառով ստիպված են հողատարածքներ վարձակալել, ու ի վերջո ամեն ինչ ընկնում է մեկ անձի ձեռքը:

Բնակչությունը խնդրի լուծման համար պետությունից ավելի շատ սուբսիդիաներ է խնդրում (օրինակ՝ վառելիք կամ ազոտ գնել կես գնով, արտոնյալ պայմաններով ժամանակակից սարքավորումների ռեսուրսների հասանելիություն)։

Ցավոք, իշխանությունը չի հասկանում գյուղացուն։ Տեղական ինքնակառավարման մարմինները զբաղված են աշխատավարձերի բարձրացման ռազմավարությամբ և չեն էլ հետաքրքրվում գյուղացիների խնդիրներով։

Երկրորդ խնդիրը, որ անհանգստացնում է գյուղացիներին (հիմնականում 0,25-ից 0,65 հա հողատարածք ունեցող փոքր ինքնագբաղվածներին) այն է, որ ոչ բոլորը կարող են կամ կշահեն այս 300 լարիից։ Այս օգնությունը ստանալու համար շահառուից պահանջվում է գրանցվել ֆերմերների ռեգիստրում և ստանալ 0,25 հա-ից մինչև 1,25 հա սուբսիդիա՝ ներառյալ հողատերերը/համատիրոջը։ Խնդիրն այն է, որ գյուղում բնակչության մեծ մասը չունի նոր ձևով գրանցված հողամաս, այսպես կոչված. Նրանք օգտագործում են «Շենարդնաձեի փաստաթղթերը» և այդ դեպքում օգնություն չեն ստանում։ Հողամասերի համակարգային գրանցումը նոր է սկսվել և կիրականացվի փուլ առ փուլ։

Ձավախքը իր ներուժով կարող է մեծ դեր խաղալ Վրաստանի տնտեսության մեջ։ Այնուամենայնիվ, փոքր հողային ռեսուրսները և՛ կարտոֆիլագործությունը, և՛ անասնապահությունը դարձնում են ոչ եկամտաբեր, քանի որ փոքր տարացքի դեպքում նրանք չեն կարողանում այնքան խոտ աճեցնել, որպեսզի կերակրեն կենդանուն։ Նման իրավիճակում բնակչության զգալի մասը կախվածության մեջ է ընկնում առանձին մարդկանցից, ովքեր տիրապետում են հողային ռեսուրսների մեծ մասը։

Վերջերս հողի հարցով Նինոծմինդայի մունիցիպալիտետի Ղաուրմա գյուղում էի։ Գյուղացիների խոսքով՝ հարյուրավոր հեկտար հողատարացք, որոնցից տարիներ շարունակ օգտվում են գյուղացիները, 73-75 ընտանիք, այժմ պատկանում են 2 կամ 3 մարդու, որոնցից մի մասի սեփականատերն գյուղի գյուղապետի է։ Տարիներ շարունակ հողօգտագործած, բայց պաշտոնապես չգրանցված տեղի բնակիչները, տեղական ինքնակառավարման կառույցներում աշխատող կամ իշխանության հետ կապեր ունեցող մեկ-երկու անձ հեշտությամբ յուրացրել են բնակչության ունեցվածքը։ Այս անձանց գործին նպաստել է նաև այն, որ գյուղի տղամարդկանց մեծ մասը արտագնա աշխատանքի է մեկնում։ Արդյունքում, այս հողերը, որոնք մարդիկ օգտագործում էին իրենց համար երկար տարիներ և տարիներ շարունակ մտածում էին իրենց սեփականություն է, հիմա գտնվում է այլ մարդկանց սեփականության տակ։ Առանց հողակտորի մնացածները պատրաստվում են դիմել դատարան արդարությունը վերականգնելու համար։

Ամեն անգամ, երբ հանդիպում եմ տեղացիների հետ, զրուցում եմ նրանց հետ և ինձ հիշեցնում են քսաներորդ դարի քաղաքական գործիչ Անտոնիո Գրամշիի առաջարկած «սուբալտեռն» հասկացությունը։ Սուբալտեռն ենթակա բառը վերաբերում է հպատակված, ուժային հարաբերություններում ճնշված խումբ կամ անձ։ Ավելի ուշ Գրամշին ընդլայնեց բառի իմաստը՝ ներառելով սոցիալական խմբեր, որոնց ձայնը լսելի չէր։ Մեր դեպքում էլ մենք այս ենթադասին ենք պատկանում, քանի որ մեր ձայնը լսելի չէ, մենք ամենից շատ զրկված ենք սոցիալական շարժունակությունից, իսկ աղքատության մեջ ծնվելն անխուսափելի իրատեսություն է։

Այսօր վերը նշված խնդիրները բացատրվում են «ժողովրդի կուրությամբ/անիմացությունով»։

Կառավարության կամ գերիշխող քաղաքական կուսակցությունների համար ժողովուրդը/բնակչությունը ակտուալ է միայն ընտրությունների ժամանակ և ոչ թե որպես ընտրող,

այլ որպես ընտրական քվե, թիվ արձանագրական փաստաթղթի վրա: Սուբալտեռնի կարծիքը նշանակություն չեւնի, նրա ձայնը չի լսվում: Մեր գյուղացիները, որպես ինքնագբաղվածներ, հարկատու չեն, որպեսզի կառավարությունը (որ իրականում պետական իշխանություն չէ, այլ սեփական բարեկեցության վրա կենտրոնացած էլիտար խումբ) հոգա նրանց կարիքները:

Ամենայն հավանականությամբ, իշխանությունը աղքատության մեղքը բարդում է բնակչության ծուլության վրա ու 300 լարիի միջոցով փորձում է բնակչության մոտ «մոտիվացիա» ստեղծել:

Բայց մի՞թե դա միայն ծուլության ու մոտիվացիաի, թե մեր անհասության մեջ: Թե՞ պատմականորեն հաստատված այդ անարդար իրականության մեջ, որը մեզ այլընտրանք չի թողնում: Լուծում գտնելը պահանջում է մեզ մոբիլիզացնել ոչ մեկ ճնշված խմբի: Գիտեմ, որ մենք հիմա դրա համար ուժ չունենք, բայց մենք դեռ լավատեսորեն ենք տրամադրված այս ուժի զարթոնքի նկատմամբ: